ՀԵԼՍԻՆԿՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՍԱՄԲԼԵԱՅԻ
ՎԱՆԱՁՈՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿ
HELSINKI CITIZENS' ASSEMBLY
VANADZOR OFFICE

2001 Հայաստանի
Հանրապետություն, Վանաձոր
Տիգրան Մեծի պողոտա 59
59 Tigran Metsi st.
Vanadzor, 2001, Republic of Armenia
Tel. (հեռ.) (374 322) 4 22 68
Fax (ֆաքս) (374 322) 4 12 36
E-mail: hcav@hcav.am

Ե/2015- 05.11/594
05.11.2015 թ.

ՀՀ արդարադատության նախարար
Ա. Հովհաննիսյանին

Հարգելի տիկին նախարար

2008 թ. մայիսի 30-ին ՀՀ արդարադատության նախարարի թիվ 44-Ն հրամանով հաստատվել է «Կալանավորվածների և դատապարտյալների հետ սոցիալական, հոգեբանական և իրավական աշխատանքներ իրականացնող կառուցվածքային ստորաբաժանումների գործունեության» Կարգը: Կարգի 12-րդ գլուխը սահմանում է կալանավորված անձանց և դատապարտյալներին ռիսկային հաշվառման վերցնելիս և հաշվառումից հանելիս սոցիալական, հոգեբանական և իրավական աշխատանքների առանձնահատկությունները:

Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակ ՀԿ-ի գործունեության նպատակներից է հանդիսանում նպաստել հավասարության և ոչ խտրական մոտեցումների զարգացմանը և թիրախային խմբերի ներկայացուցիչների իրավունքների պաշտպանությանը:

Հաշվի առնելով ՀՀ օրենսդրական կարգավորումներում առկա խնդիրների լուծման բարդությունը և կարևորությունը՝ Ձեզ ենք ներկայացնում Մեթադոնային փոխարինող բուժում ստացող անձանց պայմանական վաղակետ ազատման իրավունքի վերաբերյալ Կազմակերպության վերլուծությունը և համապատասխան առաջարկությունները:

Վերլուծության անհրաժեշտությունը պայմանավորված էր նրանով, որ մեթադոնային փոխարինող բուժում ստացող անձանց նկատմամբ խտրական վերաբերմունք է դրսևորվում՝ պատժից պայմանական վաղաժամկետ ազատելու հարցը քննարկելիս: Խտրական մոտեցման հիմքում ընկած է այն մոտեցումը, համաձայն որի՝ մեթադոնը դիտարկվում է ոչ թե որպես դեղամիջոց, այլ որպես թմրանյութ:

Անհրաժեշտության դեպքում պատրաստ ենք լրացուցիչ քննարկել և պարզաբանել ներկայացված առաջարկությունները:

Կից ներակայացվում է առաջարկությունների փաթեթը:

Հարգանքով
կազմակերպության նախագահ՝ Արթուր Սաքունց

Կատարող՝ Ս.Դավթյան
sdavtyan@hcav.am